## ՀԱՎԵԼՎԱԾ 1 –ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ 2025 Թ. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

| ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1.<br>Գավառ համայնքի երիտասարդների անձնական եվ մասնագիտական աճի ապահովում:<br><br>*Ոլորտ. Կրթություն եվ հմտությունների զարգացում: Թվային գրագիտություն* | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| **#** | **Խնդիր** | **Գործողություն** | **Ֆինանսական աղբյուրներ եվ ռեսուրսներ[1]** | **Իրականացնող/ Պատասխանատու[2]/ Համագործակից** | **Ժամկետ** | **Գնահատման աղբյուրներ եվ ցուցիչներ** |
| 1 | Աջակցել ֆորմալ և ոչ ֆորմալ կրթության ծրագրերի իրականացմանը՝ երիտասարդների անձնական ու մասնագիտական զարգացման, անհրաժեշտ կարողությունների ձևավորման ու զարգացման համար: | 1) Քննադատական մտածողության, հաղորդակցման հմտությունների, «Փափուկ հմտությունների», «Արիեստական բանականության» կենսագործունեության համար կենսական գործիքների տիրապետման դասընթացների կազմակերպում:<br><br>2) «Փափուկ հմտությունների», «Քաղաքացիական կրթության» ու հարակից այլ ոլորտների ուսուցանողների/փորձագետների բազայի ստեղծում՝ կարողությունների ու հմտությունների ուսուցման, մենթորական ու խորհրդատվական ծառայությունների մատուցելու համար:<br><br>3) ՏՀՄ–երի վերաբերյալ իրազեկման դասընթացների ու հանդիպումների կազմակերպում համայնքի բնակավայրերում: | Համայնքի բյուջե:<br>Դոնոր կազմակերպություններ:<br>Տեղական հասարակական կազմակերպություններ: | Համայնքապետարան:<br>Հասարակական կազմակերպություննե ր:<br>Երիտասարդական ոչ ֆորմալ խմբեր | | 1) Դասընթացի օրակարգ, գրանցման թերթիկներ, տեսական նյութեր (սահիկաշար ան) լուսանկարներ, հրապարակումներ, մասնակիցների կարծիքներ, պատմողական ու ֆինանսական հաշվետվություն:<br>2) Դասընթացի օրակարգ, գրանցման թերթիկներ, լուսանկարներ, հրապարակումներ, մասնակիցների կարծիքներ, հաշվետվություններ:<br>3) Դասընթացի օրակարգ, տեսական նյութեր, լուսանկարներ, հրապարակման նյութերի հղումներ, հաշվետվություններ:<br>4) Դասընթացի նյութեր, օրակարգ, մասնակիցների ցուցակներ, հրապարակումների հղումներ, լուսանկարներ, հաշվետվություններ, մասնակիցների կարծիքներ: |

[1] Ֆինանսավորման աղբյուրներ կարող են հանդիսանալ նաև ՀՀ–ում օտարկերկյա դիվանագիտական ներկայացուցչությունները՝ դեսպանությունները կամ այլ այլ երկրներում՝ օտարերկրյա դեսպանությունները, որոնք համատեղության կարգով նաև հանդիսանում են ՀՀ–ում ներկայացված որևէ պետության դիվանագիտական մարմին: Դեսպանությունները ևս հայտարարում դրամաշնորհներ, որոնց կարող են դիմել հասարակական կազմակերպությունները:
Դրամաշնորհներ են տրամադրում նաև ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալությունը (USAID), Հայաստանում Եվրոպական Միության պատվիրակությունը, Հայաստանում Եվրոպայի խորհրդի գրասենյակը, ՄԱԿ–ի Զարգացման ծրագիրը և այլ դոնոր կազմակերպություններ: Որոշ ծրագրերին կարող են դիմել նաև համայնքապետարանները՝ հասարակական կազմակերպությունների հետ համագործակցության միջոցով:
Որոշ տեղական հասարակական կազմակերպություններ իրենց ծրագրերի շրջանակում տրամադրում են փոքր ենթադրամաշնորհներ՝ տեղական նախագծերի ֆինանսավորման համար, որոնց կարող են դիմել ոչ ֆորմալ երիտասարդական խմբերը, անհատները, նաև հասարակական կազմակերպությունները:
[2] Հիմնական պատասխանատուն համայնքապետարանն է, բայց որոշակի գործողությունների իրականացման գործընթացի կազմակերպումը կարող է արտպատվիրակել համայնքում գործող կամ համայնքից դուրս գործող հասարակական կազմակերպություններին՝ տրամադրելով ուղղակի ֆինանսավորում կամ հրավիրել համագործակցության:

## ՀԱՎԵԼՎԱԾ 1 –ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ 2025 Թ. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 4) «Ինքնակենսագրական, Ուղեկցող նամակ, աշխատանքի հարցազրույցների մասնակցություն» թեմաներով դասընթացներ համայնքի տարբեր բնակավայրերի երիտասարդների համար:<br><br>5) ՏԻՄ–ի ներքո Կարիերայի կենտրոնի ստեղծում ՝ մասնագիտական (այդ թվում մասնագիտական կողմնորոշման) ու անձնական կարողությունների ու հմտությունների զարգացման դասընթացների ու միջոցառումների կազմակերպման ու համակարգման համար: | Համայնքի բյուջե:<br>Դոնոր միջազգային կազմակերպություններ:<br>Տեղական հասարակական կազմակերպություններ:<br><br>ՀՀ ԿԳՄՍՆ (տարեկան հայտատարվող թեմատիկ դրամաշնորհային մրցույթներ, որին կարող են դիմել ՀԿ–երը) | | | 5) Կենտրոնի ստեղծման որոշում: Կենտրոնի գործունեության պլան: |
| 2 | Ձեռնարկել քայլեր երիտասարդների մեդիագրագիտության մակարդակի ու ապատեղեկատվության վտանգների դեմ դիմակայության բարձրացման կարողությունների ու գիտելիքների ձեռքբերման համար: | 1) «Մեդիագրագիտություն և ապատեղկատվության դեմ պայքարի եղանակները» թեմայով առնվազն 5 մեկօրյա դասընթացների կազմակերպում:<br><br>2) «Ապատեղեկատվությունը արտակարգ իրավիճակներում. պայքարի լավագույն եղանակները և փորձը» թեմայով առնվազն 3 քննարկումների կազմակերպում՝ ոլորտի մասնագետների մասնակցությամբ:<br><br>3) Ապատեղեկատվության, կեղծ խոսույթների և պատմույթների վերաբերյալ առնվազն 2 հեռուստահաղորդում ոլորտի առաջատար փորձագետների | | Համայնքապետարան<br>Տեղական հասարակական կազմակերպություններ կամ ակումբներ:<br>Մասնագիտացված կազմակերպություններ, փորձագետներ:<br>Տեղական հեռուստատեսություն:<br>Ուսումնական հաստատություններ/ուսանողական խորհուրդներ | | 1) Դասընթացի պլան, օրակարգ, մասնակիցների գրանցման ցուցակ,տեսական ու տեսողական նյութեր, լուսանկարներ,հրապարկումների հղումներ, հաշվետվություններ:<br><br>2) Հանդիպման օրակարգ, մասնակիցների գրանցման ցուցակներ,տեսանյութեր, լուսանկաներ, հրապարակումների ցուցակներ, հրավերներ:<br><br>3) 2 հատ պատրաստված տեսանյութեր, սոց.ցանցերում հղումներ, դիտումների քանակ: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մասնակցությամբ:<br><br>4) Համայնքի բնակավայրերի կրթական հաստատություններում (դպրոցներ, քոլեջներ, ևն) մեդիագրագիտության բարձրացմանն ուղղված սիմուլյացիոն վարժանքների կազմակերպում (խաղային գործիքներով): | | | | 4) Մասնակիցների գրանցման ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ: |
| **ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 2.**<br>**Երիտասարդների զբաղվածության ու ձեռնարկատիրական գործունեության խթանում:**<br>***Ոլորտ. Զբաղվածություն եվ ձեռներեցություն*** | | | | | | |
| **#** | **Խնդիր** | **Գործողություն** | **Ֆինանսական աղբյուրներ եվ ռեսուրսներ** | **Իրականացնող/ Պատասխանատու/ Համագործակից** | **Ժամկետ** | **Գնահատման աղբյուրներ եվ ցուցիչներ** |
| 1 | Նպաստել երիտասարդների զբաղվածության և սոցիալ-տնտեսական հիմնախնդիրների լուծման համար անհրաժեշտ մեխանիզմների մշակմանը և ներդրմանը: | 1) Գավառ համայնքի երիտասարդության հիմնական խնդիրներն ու կարիքները ճշգրիտ որոշելու համար իրականացել փաստահեն հետազոտություն՝ Գավառ համայնքի երիտասարդության շրջանում:<br><br>2) Մարզի և համայնքի գործարարների ու երիտասարդների հետ հանդիպում՝ «աշխատանքային շուկայի» կարիքների ու պահանջների շուրջ քննարկման ու հաղորդակցության հաստատման համար:<br><br>3) «Աշխատանքի տոնավաճառի» կազմակերպում՝ տեղական ու | Համայնքի բյուջե:<br>Համայնքի տեղական գործարար միավորներ:<br>Միջազգային դոնոր կազմակերպություններ:<br>Տեղական հասարակական կազմակերպություններ:<br>Միասնական սոցիալական ծառայության տեղական կառույց: | Համայնքապետարան<br>Տեղական հասարակական կազմակերպություններ, ակումբներ, ոչ ֆորմալ երիտասարդական խմբեր:<br>Միասնական սոցիալական ծառայություն<br>Կրթական հաստատությունների կարիերայի կենտրոններ<br>Մասնագիտական կողմնորոշման կենտրոն | | 1) 1 հետազոտություն և արդյունքների վերլուծություն:<br><br>2) Հանդիպման օրակարգ, մասնակիցների գրանցման ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ, հանդիպման արձանագրություն, հյուրերի հրավերներ:<br><br>3) Մասնակիցների ցուցակ, լուսանկարներ, հրապարակումների |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | մարզային գործատուների մասնակցությամբ:<br><br>4) Հանդիպում-քննարկման կազմակերպում Միասնական սոցիալական ծառայության և ուսումնական հաստատությունների կարիերայի կենտրոնների մասնագետների մասնակցությամբ՝ արդի աշխատանքային շուկայի պահանջների ու երիտասարդների՝ այդ պահանջներին համապատասխանելու խնդիրների քննարկման համար:<br><br>5) Առնվազն 1 հանդիպման կազմակերպում գործատուների և հաջողակ գործարարների հետ հետ՝ երիտասարդների մոտ ձեռնարկատիրությամբ հանդեպ հետաքրքրությունը և շահադրդվածությունը բարձրացնելու համար:<br><br>6) Համայնքային համաժողովի կազմակերպում նվիրված մասնագիտական կողմնորոշման և կարիերային հարցերին: | | | | ցուցակներ:<br><br>4) Հանդիպման օրակարգ, մասնակիցների գրանցման ցուցակ, լուսանկարներ, հրապարակումների ցուցակներ, հանդիպման արձանագրություն:<br><br>5) Հանդիպման օրակարգ, մասնակիցների գրանցման ցուցակ, լուսանկարներ, հյուրերի հրավերներ, հրապարակումների հղումներ, հանդիպման արձանագրություն:<br><br>6) Համաժողովի օրակարգ, մասնակիցների գրանցման ցուցակ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ: |
| 2 | Աջակցել զբաղվածության ու ձեռնարկատիրական կարողությունների զարգացմանն ուղղված միջոցառումներին, ստարտափ նախագծերին: | 1) Տեղական ստարտափ/ձեռնարկատիրական նախագծերի ներկայացման ու ֆինանսավորման նպատակով ՏԻՄ–երի կողմից դրամաշնորհի հայտարարություն և առնվազն 2 ստարտափերի (բնապահպանական | Համայնքի բյուջե:<br>Գործարար շրջանակներ:<br>Միջազգային դոնոր կազմակերպություններ և հիմնադրամներ: | Համայնքապետարան<br>Գործարար շրջանակներ<br>Տեղական/մարզային հիմնարկ–ձեռնարկություններ<br>Հասարակական կազմակերպություններ | | 1) Հայտարարության օրինակ, ստացված դրամաշնորհային առաջարկները, ֆինանսավորված ծրագրերի վերաբերյալ արձանագրությունը: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | բաղադրիչով) ֆինանսավորում:<br>2) SMM (Social Media Marketing) –ի, բիզնես–ծրագրեր կազմելու ու այլ ժամանակակից ձեռնարկատիրական գործիքների ուսուցման առնվազն 1 դասընթացի կազմակերպում:<br><br>3) Երիտասարդների ինքնազբաղվածության ոլորտի կարիքների բացահայտում և քարտեզագրում, արդյունքների վերլուծություն: Ինքնազբաղվածության նախագծեր ֆինանսավորող հիմնադրամների ու գործարար ոլորտի հետ համագործակցության կայացման աշխատանքների կազմակերպում: | | Միջազգային դոնոր կազմակերպություններ և հիմնադրամներ: Անհատ փորձագետներ, դասընթացավարներ | | 2) Դասընթացի օրակարգ, տեսական նյութեր, մասնակիցների գրանցման ցուցակ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ, հաշվետվություն:<br><br>3) 1 վերլուծություն: |

**ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 3.**

**Երիտասարդների քաղաքացիական գիտակցության բարձրացում եվ ձայնի արժեվորում, ներգրավվածության ու իմաստալից մասնակցայնության խթանում որոշումների կայացման տարբեր մակարդակներում:**

| # | Խնդիր | Գործողություն | Ֆինանսական աղբյուրներ եվ ռեսուրսներ | Իրականացնող/ Պատասխանատու/Համագործակից | Ժամկետ | Գնահատման աղբյուրներ եվ ցուցիչներ |
|---|---|---|---|---|---|---|
| | | **Ոլորտ. Քաղաքացիական ներգրավվածություն** | | | | |
| 1 | Խրախուսել երիտասարդների ակտիվ մասնակցությունը համայնքային որոշումների կայացման գործընթացներին՝ հնարավորություն տալով նրանց բարձրաձայնել իրենց | 1) Համայնքի ղեկավարին կից Կանանց և Երիտասարդների խորհրդի կանոնակարգում համապատասխան փոփոխությունների ներառում՝ Երիտասարդական Քաղաքականության ու Գործողությունների պլանի իրականացման գործընթացում որոշակի գործառույթներ տրանադրելու համար: | Համայնքի բյուջե: Տեղական հասարակական կազմակերպություններ: | Համայնքապետարան Տեղական հասարակական կազմակերպություններ, ակումբներ: Համայքի վարչական ներկայացուցիչներ Ուսանողական խորհուրդներ | | 1) Հաստատված կանոնակարգ:<br><br>2) 2 պատրաստված |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | կարծիքը, նպաստել տեղական քաղաքականությանը և ներգրավվել կամավորական և քաղաքացիական գործունեության մեջ: | 2) Երիտասարդական քաղաքականության ու երիտասարդներին առնչվող ծրագրերի վերաբերյալ առնվազն 2 կարճ տեսահոլովակների պատրաստում և ՏԻՄ–երի պաշտոնական կայքով ու այլ մասսայականություն վայելող սոցիալական հարթակներով, տեղական հեռուստաընկերության եթերով տարածում:<br><br>3) Համայնքի առնվազն 3 վարչական բնակավայրերում երիտասարդների ու կանանց խորհուրդների ստեղծում՝ փորձնական կարգով:<br><br>4) Հանրային մեկ բանավեճ–քննարկում կազմակերպում «Ի՞նչ է տալիս համայնքին երիտասարդ–ՏԻՄ համագործակցությունը: Ինչպե՞ս խրախուսել երիտասարդի մասնակցությունը» թեմայով :<br><br>5) Երիտասարդական խմբերի /ֆորմալ և ոչ ֆորմալ/ մասնակցության կազմակերպում ավագանու նիստերին և հանրային լսումներին (տարվա ընթացքում առնվազն 3 անգամ):<br><br>6) ՏԻՄ–երի օրվան նվիրված երիտասարդների ճանաչողական այցի կազմակերպում Գավառի համայնքապետարան: | | | | տեսանյութեր, ներբեռնման հղումները, և դրանց դիտումների վիճակագրությունը:<br><br>3) 3 խորհուրդների կանոնադրություններ, հանդիպումների օրակարգեր, մասնակիցների ցուցակներ, հրապարակումների հղումներ, լուսանկարներ, հանդիպումների արձանագրություններ:<br><br>4) Միջոցառման մասնակիցների ցուցակ, հրապարկումների հղումներ, լուսանկարներ:<br><br>5) Մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ:<br><br>6) Մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ:<br><br>7) Մասնակիցների ցուցակներ, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | 7) 2026 թ. համայնքի բյուջեի նախագծի քննարկմանը համայնքի բոլոր վարչական բնակավայրերի առնվազն 30 երիտասարդի մասնակցության ապահովում: | | | | լուսանկարներ, հրապարակումների ցուցակներ: |
| 2 | Նպաստել համայնքի երիտասարդների ժողովրդավարական ու քաղաքացիական գիտակցության ձևավորմանը, կարևորել և խրախուսել նրանց ձայնը մասնակցային որոշումների ընդունման բոլոր փուլերում: | 1) Ավագանու անդամների ու համայնքի ղեկավարի մասնակցությամբ համայնքային հանդիպում «Երիտասարդների մասնակցության խոչընդոտները որոշումների կայացման գործընթացում և դրանց հաղթահարման ճանապարհները» թեմայով:<br><br>2) «Մասնակցություն որոշումների կայացմանը» թեմայով մեկօրյա առնվազն 3 դասընթացի կազմակերպում համայնքի բնակավայրերում:<br><br>3) «Առաջնորդություն» թեմայով առնվազն 2 մեկօրյա դասընթացների կազմակերպում համայնքի վարչական բնակավայրերում:<br><br>4) Առնվազն 2 սիմուլյացիոն խաղերի կազմակերպում ՏԻՄ–երի գործառույթների և որոշումների կայացման գործընթացներում բնակիչների մասնակցության վերաբերյալ (օր, ՏԻՄԱԳԵՏ ու համանման խաղերի միջոցով):<br><br>5) Ֆորում–թատրոնների կազմակերպում համայնքային | Համայնքի բյուջե:<br>Միջազգային դոնոր կազմակերպություններ:<br>Տեղական հասարակական կազմակերպություններ: | Համայնքապետարան<br>Տեղական հասարակական կազմակերպություննե ր<br>Միջազգային դոնոր կազմակերպություննե ր | | 1) Հանդիպման օրակարգ, մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ, հանդիպման արձանագրություն:<br><br>2) Դասընթացների օրակարգեր, թեմատիկ սահիկաշարեր, մասնակիցների գրանցման ցուցակներ, մասնակիցների հավաքագրման հայտարարություններ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ, հաշվետվություններ, մասնակիցների կարծիքներ:<br><br>3) Դասընթացի օրակարգեր, թեմատիկ սահիկաշար, մասնակիցների հավաքագրման հայտարարություններ, մասնակիցների գրանցման ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ, հաշվետվություն:<br><br>4) Մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ,հրապարակում ների հղումներ: |

# ՀԱՎԵԼՎԱԾ 1 –ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ 2025 Թ. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | խնդիրների լուծման գործում երիտասարդի դերակատարության կարևորության ու մասնակցայնության ու դրա հետ կապված կարծրատիպերի, ինչպես նաև ՏԻՄ–երի գործառույթների հետ վերաբերյալ (առնվազն 3 ֆորում–թատրոն՝ 3 վարչական բնակավայրերում): | | | | 5) Մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, տեսանյութեր, հրապարակումների հղումներ: |

**ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 4.**

**Երիտասարդների աջակցության խթանում, կամավորության եվ ոչ ֆորմալ կրթությամբ զարգացման հնարավորությունների ընդլայնում:**

***Ոլորտ.Երիտասարդների աջակցություն եվ կամավորություն***

| # | Խնդիր | Գործողություն | Ֆինանսական աղբյուրներ եվ ռեսուրսներ | Իրականացնող/ Պատասխանատու/ Համագործակից | Ժամկետ | Գնահատման աղբյուրներ եվ ցուցիչներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Խթանել կամավորության մշակույթի տարածման երիտասարդների շրջանում: | 1) «Տարվա կամավոր» համայնքային մրցանակաբաշխության կազմակերպում:<br>2) «Կամավորի միջազգային օր» միջոցառման կազմակերպում:<br><br>3) Քննարկում «Համայնքի կամավորների ներգրավվումը համայնքային ծրագրերում. կամավորների դերը արտակարգ իրավիճակներում» թեմայով ՏԻՄ–երի ու հասարակական կազմակերպությունների մասնակցությամբ՝ որոշ հրատապ ու անհետաձգելի իրավիճակներում կամավորների ներգրավվման մեխանիզմների մշակման | Համայնի բյուջե:<br>Տեղական, մարզային գործարար շրջանակներ: | Համայնքապետարան<br>Տեղական հասարակական կազմակերպություննե ր<br>Կամավորներ, ոչ ֆորմալ խմբեր | | 1) Մասնակիցների ցուցակներ, «Տարվա կամավորի» ընտրման հանձնաժողովի կազմավորման արձանագություն, լուսանկարներ, տեսանյութեր, հրապարակումների հղումներ, հրավերներ:<br>2) Միջոցառման սցենար–պլան: Մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, տեսանյութեր և դրանց դիտումների վիճակագրություն, հրապարակումների հղումներ:<br>3) Քննարկման օրակարգ, մասնակիցների ցուցակներ, հրավերներ, լուսանկարներ, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | նպատակով:<br><br>4) «Կամավորությունը որպես կյանքի լավագույն փուլ»–թեմայով առնվազն 2 զրույց–հանդիպումներ կամավորության նշանակալի ու հաջողված փորձ ունեցող անձանց–խոսնակների հետ: | | | | հրապարակումների հղումներ, արձանագրություն:<br><br>4) Հանդիպումների օրակարգեր, խոսնակների հրավերներ, մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ: |
| 2 | Աջակցել տեղական երիտասարդական կազմակերպություններին իրենց նախաձեռնությունների իրականացման գործընթացում: | 1) Տեղական ՀԿ–երի համար երիտասարդների քաղաքացիական ակտիվությունը խթանող տեղական դրամաշնորհային նախագծերի ֆինանսավորման մրցույթի կազմակերպում (առնվազն 2 դրամաշնորհային առաջարկի ֆինանսավորում) և դրամաշնորհների տրամադրում:<br><br>2) Համայնքի հասարակական կազմակերպությունների, այդ թվում երիտասարդական, ոչ ֆորմալ խմբերի ու հիմնադրամների, միջազգային կազմակերպությունների տեղական գրասենյակների (անհրաժեշտության դեպքում՝ հրավիրել միջազգային դոնոր կազմակերպությունների, գործարարների) ներկայացուցիչների համաժողով՝ ծրագրերի ու գաղափարների քննարկման, հնարավոր ֆինանսավորման աղբյուրներին դիմելու, համագործակցության նոր ցանցերի ստեղծման նպատակով: ԵՔ–ի 2025 թ. ԳՊ–ով նախատեսված | Համայնքի բյուջե: | Համայնքապետարան Տեղական հասարակական կազմակերպություններ | | 1) Մրցույթի հայտարարությունների հղումներ, ստացված դրամաշնորհային առաջարկներ (քանակը), գնահատման հանձնաժողովի կազմավորման արձանագրությունը և հանձնաժողովի անդամների ցուցակը, ֆինանսավորված առաջարկների վերաբերյալ արձանագրությունը:<br><br>2) Համաժողովի օրակարգ, մասնակիցների ցուցակ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ, հրավերներ, ԵՔ ԳՊ–ի իրականացման հաշվետվություն: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | աշխատանքների ու արդյունքների ներկայացում (հաշվետվություն): | | | | |
| 3 | Բարձրացնել երիտասարդների իրազեկվածությունը կրթական ծրագրերի մասին | 1) Ուսուցողական հանդիպումների կազմակերպում ոչ ֆորմալ կրթության վերաբերյալ՝ ոլորտի առաջատար փորձագետների/ուսուցանողների ու կազմակերպությունների ներկայացուցիչների մասնակցությամբ:<br>2) Հանրային բանավեճ «Ինչու՞ կամավորություն. առավելությունները երիտասարդի ու համայնքի համար»:<br>3) Հաջողության պատմությունների պատրաստում և տարածում երիտասարդների շրջանում /կարճ տեսանյութեր, հոդվածներ տեղական կայքերի համար, հեռուստահաղորդում հաջողության պատմության «հերոսի» մասնակցությամբ՝ տեղական հեռուստատեսությամբ:<br>4) Այլ համայնքների ոչ ֆորմալ խմբերի հետ հանդիպում՝ իրենց փորձը տեղի երիտասարդների ներկայացնելու համար:<br>5) Տեղի երիտասարդների կրթական կարիքների բացահայտման առցանց կամ դեմ առ դեմ հարցման իրականացում ու արդյունքների վերլուծություն:<br>6) Երիտասարդների զարգացման ծրագրեր իրականացնող կազմակերպությունների հետ | Համայնքի բյուջե:<br>Միջազգային դոնոր կազմակերպություններ:<br>Տեղական հասարակական կազմակերպություններ: | Համայնքապետարան<br>Ոլորտային փորձագետներ<br>Տեղական հեռուստաընկերություն<br>Ոլորտային հասարակական կազմակերպություններ<br>Ոչ ֆորմալ խմբեր այլ համայնքներում | | 1) Հանդիպումների օրակարգեր, մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ, հրավերներ:<br><br>2) Միջոցառման մասնակիցների ցուցակ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ:<br>3) Հաջողության պատմությունների քանակը, տեսանյութեր՝ հղումները և դիտումների վիճակագրությունը, հոդվածներ՝հղումները, 1 հեռուստահաղորդման հղում՝ դիտումների վիճակագրությամբ:<br><br>4) Հանդիպման մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ:<br><br>5) Հարցման արդյունքների 1 վերլուծություն, հարցաթերթիկի օրինակ, հարցված մասնակիցների քանակ:<br><br>6) Հանդիպման օրակարգ, մասնակիցների ցուցակ, լուսանկարներ, |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | հանդիպում՝ երիտասարդներին կրթական տարբեր ծրագրերին ու դրանց մասնակցության կարգին ծանոթացնելու համար: | | | | իրապարակումների հղումներ: |

**ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 5.**

**Առողջ, մաքուր եվ բարեկեցիկ միջավայրի ապահովում՝ երիտասարդների առողջ ապրելակերպի, հոգեվոր–մշակութային, սոցիալական ու այլ կարիքների ապահովման համար:**

***Ոլորտ. Մշակութային–հոգեվոր եվ ժամանցային գործունեություն, բնապահպանական իրազեկում***

| # | Խնդիր | Գործողություն | Ֆինանսական աղբյուրներ եվ ռեսուրսներ | Իրականացնող/ Պատասխանատու/ Համագործակից | Ժամկետ | Գնահատման աղբյուրներ եվ ցուցիչներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Խթանել առողջ ապրելակերպը երիտասարդության շրջանում և բարձրացնել իրազեկությունը առողջ ապրելակերպին սպառնացող վտանգների վերաբերյալ: | 1) Սոցիալական աջակցության, բնապահպանության, կրթության և մշակույթի ոլորտները ընդգրկող կամավորական ծրագրերի մշակում:<br><br>2) Առողջության պահպանմանը վտանգող սովորույթների ու երևույթների (օր. թմրամոլություն, խաղամոլություն, ալկոհոլի չարաշահում, ծխախոտի օգտագործում, սեռավարակներ ևն) վերաբերյալ առնվազն 4 զրույց–հանդիպումներ համապատասխան մասնագետների/բժիշկների, նաև Հայ Առաքելական եկեղեցու տեղի սպասավորի մասնակցությամբ: | Համայնքի բյուջե: Առողջության պահպանման մասնագիտացված կառույցներ: | Համայնքապետարան Մասնագիտացված առողջապահական կառույցներ, մասնագետներ Հայ Առաքելական եկեղեցու տեղական թեմ | | 1) Մշակված 1 ծրագիր<br><br>2) Հանդիպումների օրակարգեր, մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, թեմատիկ սահիկաշարեր, հրապարակումների հղումներ: |

ՀԱՎԵԼՎԱԾ 1 –ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ 2025 Թ. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| 2 | Խթանել երիտասարդների ներգարվվածությունը հոգևոր–մշակութային կյանքին, բարձրացնել նրանց բնապահպանական իրազեկվածության, պատրաստվածության և դիմակայության աստիճանը արտակարգ իրավիճակների դեպքում: | 1) «Մաքուր բակ», «Մաքուր վարչական բնակավայր» բնապահպանական մրցույթների անցկացում:<br><br>2) «Գավառի արվեստի ու արհեստի փառատոն» միջոցառման կազմակերպում՝ համայնքի շնորհաշատ երիտասարդների մասնակցությամբ:<br><br>3) Մարզի/համայնքի բնապահպանական խնդիրների վերաբերյալ իրազեկման առնվազն 3 սեմինար–քննարկումների կազմակերպում՝ բնապահպանական խնդիրներով զբաղվող տեղական կազմակերպության կողմից:<br><br>4) «Ինչպե՞ս գործել արտակարգ իրավիճակներում. երկրաշարժ, ջրհեղեղ, հակամարտություններ» թեմայով առնվազն 2 դասընթացի կազմակերպում ոլորտային կազմակերպությունների կողմից:<br><br>5) «Առաջին բուժօգնություն» թեմայով առնվազն 3 դասընթացի կազմակերպում ոլորտային կազմակերպության կողմից: | Համայնքի բյուջե:<br>Համայնքի Արվեստի ու մշակույթի ՀՈԱԿ–ներ:<br>Միջազգային դոնոր կազմակերպություններ:<br>Տեղական հասարակական կազմակերպություններ: | Համայնքապետարան<br>Համայնքի Արվեստի ու մշակույթի ՀՈԱԿ–ներ:<br>Հայկական կարմիր խաչի ընկերություն:<br>Տեղական հասարակական կազմակերպություննե ր<br>ԱԻՆ տեղական ստորաբաժանում | | 1) Մրցույթների հայտարարություններ և հղումներ, մրցութային հանձնաժողովի կազմավորման արձանագրություն և անդամների ցանկը: Մրցույթի հաղթողի որոշման արձանագրություն, լուսանկարներ, հեռուստառեպորտաժ, հրապարակումների հղումներ:<br>2) Փառատոնի պլան, մասնակիցների ցուցակներ, հրավերներ, լուսանկարներ, տեսանյութեր և հղումները, հրապարակումների հղումները:<br>3) Հանդիպումների օրակարգեր, թեմատիկ սահիկաշարեր և նյութեր, մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ, մասնակիցների կարծիքներ:<br>4) Դասընթացների օրակարգեր, թեմատիկ նյութերի օրինակներ, բաշխիչ նյութեր, օրակարգեր, մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ:<br><br>5) Դասընթանցերի օրակարգեր, մասնակիցների ցուցակներ, թեմատիկ սահիկաշարարեր, տեղեկատվական թերթիկներ,կրթական նյութեր, լուսանկարներ, հրապարակումների հղումներ: |

ՀԱՎԵԼՎԱԾ 1 –ԳՈՐԾՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՊԼԱՆ 2025 Թ. ԳԱՎԱՌ ՀԱՄԱՅՆՔԻ ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ

**ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 6.**
**Միջազգային համագործակցություն երիտասարդության ոլորտում:**

*Ոլորտ. Միջազգային համագործակցություն և միջմշակութային երկխոսություն*

| # | Խնդիր | Գործողություն | Ֆինանսական աղբյուրներ եվ ռեսուրսներ | Իրականացնող/ Պատասխանատու/ Համագործակից | Ժամկետ | Գնահատման ցուցիչներ |
|---|---|---|---|---|---|---|
| 1 | Խթանել համայնքի երիտասարդների և այլ երկրների երիտասարդների հետ համագործակցության, միջմշակութային երկխոսությանը, աջակցել համատեղ ծրագրերի իրականացմանը: | 1) Պոտենցիալ միջազգային գործընկերների բացահայտում, ներառյալ այլ համայնքների հասարակական (այդ թվում `երիտասարդական ոլորտի) ու կազմակերպություններ, միջազգային կազմակերպությունների տարածաշրջանում գործող ներկայացուցչություններ:<br>2) Հանրային խնդիրների լուծմանն ու երիտասարդության զարգացմանն ուղղված համատեղ միջազգային նախագծի/նախագծերի պլանավորում և իրականացում:<br>3) Երիտասարդների համար մշակութային փոխանակումների կազմակերպում, ներառյալ` փառատոններ, կրթական ճամբարներ, ևն: | Համայնքի բյուջե: Միջազգային դոնոր կազմակերպություններ: Ոլորտում մասնագիտացված հասարակական կազմակերպություններ: ՀՀ–ում ներկայացված միջպետական միջազգային կազմակերպություններ: | Համայնքապետարան Հասարակական կազմակերպութուններ Միջազգային դոնոր կազմակերպություննե ր | | 1) Գործընկերների ցուցակ` ըստ ոլորտային գործունեության:<br>2) Հաստատված պլան, փոխըմբռնման հուշագրեր կամ համագործակցությունը հաստատող փաստաթուղթ:<br>3) Փառատոնի/կրթական ճամբարի պլան, մասնակիցների ցուցակներ, լուսանկարներ, հրապարակումների հղումներ, համագործակցության նամակներ, պայմանագրեր, հաշվետվություններ ևն: |